ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ
ԿՈՄԻՏԵ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՄՈՒՇՆԵՐ (ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐ) ԸՆՏՐԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Մ. ՉԱՔԱՐՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

11-28726qp

31 JAN 2018

ՀԱՍՏԱՏԵԼ Է՝
Համամիութենական գյուղատնտեսական
ցուցահանդեսի կոմիտեն 1937 թվի
սեպտեմբերի 14-ին

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՄՈՒՇՆԵՐ (ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐ) ԸՆՏՐԵԼՈՒ, ՊԱՇՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԵՂ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

I. Այն կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները, մեքենատրակտորային կայանները, կոլտնտեսային ապրանքային ֆերմաները, ինչպես և գյուղատնտեսության առաջավորներն ու կազմակերպիչները, վորոնց նվաճումները համապատասխանում են Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի կոմիտեյի վորոշմամբ սահմանված պահանջներին՝ հաստատված ԽՍՀՄ ԺԿԽ և Համկ(բ)կ ԿԿ 1937 թ. հունիսի 14-ի, նույնպես և ցուցահանդեսի կոմիտեյի 1937 թ. հուլիսի 15-ի № 129 վորոշումներով, ցուցահանդես ներկայացնում են գյուղատնտեսական արտադրության իրենց լավագույն նմուշները (եքսպոնատները):

II. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի եքսպոնատներ կարող են լինել.

ա) Բնական նմուշներ. յերկրագործության ու անասնապահության արտադրանքի եքսպոնատներ, բույսերի, անասունների աչքի ընկնող եկզեմպլյարներ, գյուղատնտեսական արտադրության մեքենաներ ու սարքավորում.

Ծանոթություն.—Ցուցահանդեսի համար լավագույն կենդանիներ ընտրելու հրահանգը հրատարակվում է առանձին:

բ) Կերպարանային եքսպոնատներ. (մոդելներ, մակետներ, նկարներ, ասեղնագործներ, գորգեր, փայտե և մետաղե տնայնագործական շինվածքներ, լուսանկարներ և այլն), որոնք լրացնում և լուսաբանում են Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցների արտադրական նվաճումները:

Ծանոթություն.— Լուսանկարներն ու նեգատիվները ներկայացվում են դոկումենտների հետ:

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ ԵՆ 1937 ՑԵՎ 1938 ԹՎԻ ԲԵՐՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՄՈՒՇՆԵՐԻՑ

I. ՀԱՏԻԿԱՅԻՆ ՑԵՎ ԼՈԲԱԶԳԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Հատիկային եքսպոնատները ցուցահանդես են ներկայացվում հետևյալ ձևով ու քանակով.

ա) ցորեն, հաճար, գարի, կորեկ, հնդկացորեն, վարսակ, բրինձ ցուցահանդես են ներկայացվում.

Ցողունների մեկական չկալված խուրձ արմատներով հանդերձ 25–30 սանտիմետր տրամագծով և 16-ական կիլոգրամ հատիկ մանր պարկերով (յեգիպտացորենը ներկայացվում է կողերով):

բ) Յեգիպտացորենն ու սորգոն ցուցահանդես են ներկայացվում 10-ական չկալված ցողուն արմատներով և 16-ական կիլոգրամ սերմ մանր պարկերով:

գ) Լոբազգիները՝ սիսեռը, լոբին, բակլան, գետնանուշը, վիկան և վոսպը ներկայացվում են 50-ական չկալված ցողուն արմատներով և 16-ական կիլոգրամ սերմ մանր պարկերով:

Բացի սրանից, լոբազգիներից ներկայացվում են նաև 5 հերբարային եկզեմպլյար և յուրաքանչյուր լոբազգիից 500 պատճ:

Ծանոթություն.— Փորձնական հողամասերից և առանձնապես դեֆիցիտային նոր սորտերից նմուշներ կարող են ներկայացվել տնտեսության կամ սորտի հեղինակի հայեցողությամբ նշանակված քանակով, իսկ հասկավորներից վոչ պակաս, քան 50 բույս և մեկ կիլոգրամ հատիկ:

Կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում հատիկային կուլտուրաների եքսպոնատներն ընտրվում են լավագույն, առավելապես սերմացվի համար հատկացված հողամասերից:

Ցուցահանդեսս կարող են ներկայացվել ԽՍՀՄ-ում մշակվող հատիկային և լոբազգի կուլտուրաների բոլոր սելեկցիոն և տեղական սորտերի նմուշները:

Ցանքերի ներկայացվող նմուշները ցանքային հատկություններով պետք է ավելի ցածր չլինեն, քան պետական ստանդարտով I-ին կարգի համար սահմանված պահանջները:

Հատիկային կուլտուրաների բույսերի նմուշները պետք է ջոկվեն.

ա) հասկավորները՝ մոմային հասունության վերջի շրջանում.

բ) յեգիպտացորենն ու սորգոն՝ լրիվ հասունության շրջանում.

գ) լոբազգիները՝ դրանց ստորին և միջին շարքի հասունության շրջանում.

դ) լոբազգի կուլտուրաների բույսերի հերբարացումը պետք կատարվի լրիվ ծաղկելու ժամանակ.

ե) լոբազգի հատիկը բույսի միջին շարքից քաղել լրիվ հասունության ժամանակ.

զ) բոլոր կուլտուրաների հատիկները լրիվ հասած վիճակում:

ՀԱՏԻԿԱՅԻՆ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Այն խրձերը, որոնք վերցվում են լավագույն, գլխավորապես սերմացվի դաշտամասից, նախքան պահեստ դնելը պետք է լավ նախապատրաստել: Խրձի համար բույսերը պետք է ընտրել ըստ ցողունի և հաս-

կի մեծության, սորտային մաքրության, լավ չորացնել (խոնավությունը 12–13%–ից վոչ ավելի)։ Խրձից մոլախոտերը պետք է հանել։

Ցուրաքանչյուր խրձի մեջ պետք է դնել նախապես ախտահանված չոր փայտի մի ձող։

Ցուցահանդեսի համար ջոկված հացահատիկը պետք է խնամքով սորտավորված լինի և չորացված (12–13 տոկոսից վոչ ավելի խոնավությամբ)։ Խրձերը պետք է կապված լինեն 3 տեղից։ 1–ին կապը արմատից $^1/_3$–ով հեռու, 2–րդը ցողունի յերկարության կեսին և 3–րդը հասկին մոտիկ, թույլ չտալով, վոր խուրձը շատ ձգվի, ծղոտը ջարդվի ու կորանա։ Պետք է կապել 2–3 սմ լայնությամբ ժապավենով։

Լոբազգիները կապվում են արմատին մոտ և վոչ պիրկ՝ խրձի կեսից։

Խրձի հասկավոր մասը 2–րդ կապի մակարդակի վրա փաթաթված պիտի ունենա մաքուր թուղթ։ Փաթաթանի ներսում դրվում է նավթալինով լի մարլայի պարկիկ և պիտակ (ետիկետկա) (ամրացված 2–րդ կապին) նշելով տնտեսության հասցեն, կուլտուրայի, սորտի անունը։

Սերմացուն պետք է պահպանվի կտավե նոր պարկերի մեջ, վորտեղ պետք է դնել նաև նավթալինով լի մարլայի պարկիկ և պիտակ՝ նշելով տնտեսության հասցեն, սորտի անունն ու կշիռը։

Սերմերի ու խրձերի պատրաստված նմուշները պետք է ախտահանել ագրոնոմի ղեկավարությամբ այն յեղանակներից մեկով, վոր նախատեսված են ԽՍՀՄ Հողժողկոմատի 1936 թ. հրատարակված № 131 պատկերազարդ հրահանգներում։

Խուրձը պահպանելիս պետք է կախված լինի հասկերը ցած։ Արմատի մասից մինչև յերկրորդ կապը խուրձը պետք է փակել թղթով։

Տնտեսության մեջ բոլոր եքսպոնատներն ընտրվում և պահպանվում են յեռակի քանակությամբ։

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը։

ա) ագրոսպասպորտը,

բ) սերմնաստուգիչ լաբորատորիայի վկայականը Հատիկի վորակի մասին,

գ) ցանքի ագրոբացիայի ակտը,

դ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը։

II. ԿԵՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Ցուցահանդես կարող են ներկայացվել հետևյալ հիմնական կերային կուլտուրաները. յերեքնուկ, առվույտ, կորնգան, տուրնեպս, կերի ճակնդեղ, կերի գազար, գոնդեղ, գետնախնձոր, վիկա, մաղար, սուդանի խոտ, ժիտնյակ, ռայգրաս, վոզնախոտ, աղվեսագի, տիմոֆեյի խոտ, անքիստ ցորենուկ, սեղ ամերիկական, դաշտախոտեր, մարգագետնային շուտախոտ և այլ կերային կուլտուրաներ։

Եքսպոնատները ներկայացվում են հետևյալ ձևով, չափով ու քանակությամբ.

ա) կերաբույսերի չորացրած խրձիկներ՝ 3 քառակուսի մետր տարածությունից.

բ) կերային արմատապտուղներ 48–ական կիլոգրամ.

գ) կերադդում՝ 5 եկզեմպլյար.

դ) սահմանված կոնդիցիաների սերմեր— դաշտախոտ, կերի ճակնդեղ, սիլոսային և բանջարանոցային կուլտուրաներ՝ 2–ական կիլոգրամ.

ե) բարձրորակ սիլոսներ հերմետիկ փակված ամանով՝ 15–20–ական կիլոգրամ։

Կերաբույսերի, արմատապտուղների ու բոստանա-

յին կուլտուրաների սերմերը և արմատները պահում են նույն ձևով, ինչպես նշված է սույն հրահանգում հացահատիկների, շաքարի ճակնդեղի և պարենային բոստանային կուլտուրաների պահպանության վերաբերյալ։

ԿԵՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը. ա) ագրոպասպորտը և բ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը։

III. ԲԱՄԲԱԿ

Բամբակի եքսպոնատները ներկայացվում են.

ա) անմշակ բամբակ, սերմ և բամբակաթել։ Կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում սերմերն ու բամբակաթելը կարող են ստացվել անմշակ բամբակը մաքրելով ձեռքի «ջինով» մոտակա սերմնաստուգիչ կամ գործարանային լաբորատորիայում.

բ) առանձին կենդանի բույսեր ամաններում կամ արկղներում, աճեցված մինչև կնդուղների բացման փուլը.

գ) բամբակենու կոնսերված (չորացրած) թփեր՝ տերևներով, կոկոններով, ծաղիկներով, բացված և չբացված կնդուղներով։ Այս թփերը բնորոշ պիտի լինեն տվյալ սորտի համար, ցույց տան բամբակենու լավ զարգացումը և նրա բարձր բերքատվությունը.

դ) հերբարիումներ ապակե ցուցափեղկերի տակ։ Հերբարային նմուշները պետք է կազմված լինեն տերևից, կոկոնից, ծաղկից, կնդուղից և բացված ծաղկաբաժակից։

Ծանոթություն.— Բամբակի եքսպոնատները ցուցահանդես կարող են ներկայացվել «ա», «բ», «գ», «դ» կետերում նշված եքսպոնատների մեկ կամ մի քանի տեսակներից։

Ցուցահանդես կարող են ներկայացվել նմանապես բամբակի վերամշակման արդյունքների եքսպոնատները. լինտեր, քուսպ և ձեթ։

Բամբակենու թփերը ցուցահանդես են ներկայացվում 5 եկզեմպլյար քանակով, կնդուղները՝ 20 հատ, անմշակ բամբակը՝ 5 կիլոգրամ, բամբակաթելը՝ 2 կիլոգրամ, սերմերը՝ 2 կիլոգրամ, հերբարիումները՝ 2 եկզեմպլյար։

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում ջոկված բամբակենու կնդուղները, անմշակ բամբակը, բամբակաթելը և սերմերը մինչև ցուցահանդես ուղարկելը պետք է պահպանվեն տնտեսություններում չոր շենքերի մեջ։

Բամբակենու չորացված թփերը փաթաթվում են պերգամենտի կամ պինդ թղթի մեջ և դասավորվում փայտե արկղների մեջ՝ յուրաքանչյուր թուփ թելով ամրացնելով արկղի կողին։

Կնդուղների նմուշները, անմշակ բամբակը, բամբակաթելն ու սերմերը պետք է պահպանել փայտե կամ կարտոնե արկղներում։

ԲԱՄԲԱԿԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) լաբորատորիայի վկայականը սերմերի ու բամբակաթելի վորակի մասին.

դ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

IV. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂ

Շաքարի ճակնդեղի և ցիկորու արմատները պետք է ընտրել 1937 թ. բերքից և պահել մինչև ցուցահանդեսի փակվելը, այսինքն՝ մի տարուց ավելի, դրա համար էլ առանձնապես ուշադիր կերպով պետք է ընտրել և լավ պահպանել:

Ճակնդեղի սերմը պետք է ներկայացնել կշռով՝ 2 կիլոգրամ՝ 80 տոկոսից վոչ պակաս ծլունակությամբ, 99 տոկոս մաքրությամբ, 13 տոկոսից վոչ ավելի խոնավությամբ: Սերմը պետք է մաքրված լինի 3 միլիմետրանոց մաղով:

Արմատները ընտրում են մասսայական բերքահավաքի ժամանակ՝ լրիվ հասունացած բույսերից: Արմատը պետք է լինի կանոնավոր, տվյալ սորտը բնորոշող ձևի, իսկ ըստ մեծության համապատասխանի տվյալ պլանտացիայի տնկվածքի խտությունից ստացված բերքին:

Առանձնապես խոշոր, անկանոն ձևի, փչակավոր, ճյուղավորված, մեխանիկական վնասվածքներով (հարվածներով, կտրվածքներով, վնասատուներից և այլ պատճառով վնասված) արմատները, նույնպես և զանազան հիվանդություններով վարակվածները չեն ընտրվում և ի ցույց չեն դրվում:

Զանազան վնասվածքներից, նույնպես և չորանալուց խուսափելու համար, արմատները ընտրվում են վոչ թե կույտերից, այլ անմիջապես հողից՝ փորելուց հետո:

Հողից հանելուց հետո մաքրվում է արմատների վրայի հողը, կողային արմատները և տերևները: Արմատի վրայի հողը թափ է տրվում և վոչ թե քերվում:

Կողային արմատներն զգուշությամբ կտրում են, առանց կաշին վնասելու:

Փրերը (տերևները) կտրտվում են նույն ձևով, ինչպես սերմի համար պահվող արմատները, այսինքն՝ բոլոր բողբոջները պետք է պահվեն:

Չորանալուց խուսափելու համար մաքրած արմատները պետք է լավ ծածկել (կտավներով, պարկերով, փալասներով):

Չի կարելի արմատները դետին դցել կամ տեղափոխության ժամանակ իրար խփել-հարվածել:

Արմատները լավ պահպանելու համար ընտրությունը պետք է կատարել յերկու պարտիայով՝ 50-ական հատ—շաքարի ճակնդեղից և ցիկորուց:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի կոմիտեի պահանջի համաձայն՝ Մոսկվա ուղարկվում է միայն մի պարտիան, իսկ յերկրորդ պարտիան չարունակում են պահել կոլտնտեսությունում —խորհտնտեսությունում, մինչև տեղեկություն կստացվի այն մասին, վոր արմատներն ստացված են լրիվ անվնաս վիճակում:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ա) Արմատները պետք է պահել չոր, լավ ոդափոխվող, կրծողներից ազատ և բավարար զով նկուղներում կամ հատուկ բանջարապահեստներում: Պահեստները շինվում են պահելու հատուկ տեղերով (պատվանդաններ), վենտիլյացիայով, լավ փակերով և ջերմաչափներով՝ ոդի փոփոխությունները դիտելու համար:

Պահեստներում, գյուղատնտեսի ցուցումով և նրա ղեկավարությամբ նախորոք վոչնչացվում են միջատները:

Այն պահեստներում, վորտեղ պահվում են եքսպոնատները, չպետք է պահվեն այլ շուտ փչացող արմատապալարապտուղներ:

Յեթե եքսպոնատները պահելու համար այլ հնարք չկան, պահեստների մի մասը հատ միջնատախտակներով առանձնացվում է:

բ) Ընտրված արմատները դարսվում են նախորոք պատրաստված արկղների մեջ, վորոնց պատերը տախտակների միջև պետք է ունենան 2–3 սանտիմետր բացվածքներ (արանքներ):

Արմատներն արկղի մեջ դարսում են արմատները հողից հանելու որը:

Արմատներն արկղի մեջ դարսում են շերտերով և մեկը մյուսից բաժանում մաքուր, լավ չիկացրած ավազի շերտով, վորի խոնավությունը պետք է լինի 20 տոկոս: Ավազի շերտի հաստությունը պետք է լինի 4–5 սանտիմետր:

Արմատների վրա հանդցրած կիր են շաղ տալիս:

Արմատներ դարսած արկղները վերևից տախտակով պետք է ծածկվեն և դրվեն պատվանդանների վրա:

գ) Պահեստում ամեն որ պետք է ստուգվի ոդի ջերմաստիճանը և ոդափոխությամբ կանոնավորելով՝ պահպանվի միևնույն մակարդակի վրա:

Ամբողջ ժամանակ ջերմությունը պետք է լինի հավասարաչափ և հավասարվի Ցելսիուսի +1+2°-ի:

Պարբերաբար, բայց ամիսը մի անգամից վոչ ուշ գյուղատնտեսի ներկայությամբ արմատները զննվում են և բոլոր հիվանդացած արմատները հեռացվում են:

Այն դեպքում, յերբ արկղում հայտաբերվել են հիվանդացած արմատներ, ամբողջ ավազը վերցվում և փոխարինվում է նորով:

Եքսպոնատներ ընտրելու և նրանք պահեստ դարսելու ժամանակ արձանագրություն է կազմվում՝ գյուղատնտեսի, կոլտնտեսության նախագահի և առաջավոր ողակավարի ստորագրություններով (յեթե եքսպոնատը ողակից է):

Արմատներն ուղարկում են միապաղաղ, թանձր, ֆաներայից կամ բարակ տախտակներից շինած արկղներով:

Արմատներն արկղների մեջ նույնպես դարսվում են շերտերով և արմատները միմյանցից բաժանվում են ողոցուքով կամ այլ թեփով: Ցուրաքանչյուր արմատի արանքը պետք է լինի 4–5 սմ-ից վոչ պակաս:

Արմատներն ուղարկվում են համաձայն Համամիութենական ցուցահանդեսի կոմիտեյի՝ եքսպոնենտին տրված լրացուցիչ ցուցումների:

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՈՒ ՑԻԿՈՐՈՒ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը.

գ) տեղեկանք՝ գործարանին հանձնած շաքարի ճակնդեղի և ցիկորու ամբողջ քանակի մասին:

V. ՑՈՒՂԱՐԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Ցուցահանդես կարող են ներկայացվել ԽՍՀՄ-ում արտադրվող բոլոր յուղաբեր կուլտուրաների եքսպոնատները:

Եքսպոնատները ներկայացվում են խրձերով, ամբողջ բույսերով, նրանց մասերով ու սերմերով:

Ցուղաբեր կուլտուրաների եքսպոնատները ցուցահանդես են ներկայացվում հետևյալ կշռով ու քանակով.

Բույսերի անունը	Քանակը	
	Սերմ (կգ)	Բույսեր և բույսերի մասեր
1. Արևածաղիկ	15	Ցողուններ արմատներով և կոդովներով՝ 10 հատ։
2. Տրգկանեփ	15	10 փունջ. կտրված մոմային, հասունության շրջանում։
3 Սոյա	15	2 խուրձ*)
4 Վուշ-կուղբյաշ	15	2 »
5. Մանանեխ	15	2 »
6. Քնջութ	5	2 »
7 Արախիս	8	3 հերբարային եկզեմպ.
8. Կանեփակ (սաֆլոր)	15	2 խուրձ
9. Գերիլլ	5	2 »
10. Ռապս աշնան	15	2 »
11. Կ կաչ	5	2 »
12. Լյալեժանցիա	5	2 »
13. Գարնան ռապս	15	2 »
14. Սորեկ	15	2 »
15. Զուգա պատիճներով 5 կգ.	15	2 »

*) Խրձի տրամագիծը 15 սմ

Բացի եքսպոնատների թվարկված տեսակներից, յուղաբեր կուլտուրաներից ցուցահանդես կարող են ներկայացվել նաև յուղերի ու այս կուլտուրաների վերամշակման այլ արդյունքների նմուշները։

Բոլոր յուղաբեր կուլտուրաներից պետք է ներկայացնել այնպիսի եքսպոնատներ, որոնք բնորոշ են բույսերի տվյալ տեսակի ու սորտի համար և ակնառու արտահայտում են նրանց լավ զարգացումն ու բարձր բերքատվությունը։

Ներկայացված սերմերը պետք է լինեն ազնիվ սորտի և բավարարեն սորտային ազնվության առաջին կատեգորիային ու ցանքային հատկությունների առաջին կարգին։

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ա) Ցուրաքանչյուր յուղատու կուլտուրայի եքսպոնատները (ամբողջ բույսեր և նրանց մասերը) փաթաթվում են հաստ մաքուր թղթի մեջ. եքսպոնատների մեջ դրվում է մառլայի պարկիկ՝ նաֆտալինով լցրած և պիտակ՝ ցույց տալով տնտեսության հասցեն և սորտի, կուլտուրայի անունը։ Վնասատուներից վնասվելուց խուսափելու համար թղթի կարերը (յեզրերը) խեժով կպցնում են։

Վուշի, մանանեխի, ռապսի, կոլզայի, կակաչի, պերիլլի խրձերի մեջ դնում են ախտահանված փայտյա ձողեր՝ կորանալուց խուսափելու համար։

Սերմնանյութը տեղավորվում է նոր քաթանե պարկիկի մեջ, վորտեղ պետք է պիտակ դնել, ցույց տալով տնտեսության հասցեն, սորտի անունը և քանակը։

Արմատները, չորացրած տերևները, բույսերի բացառիկ նուրբ առանձին մասերը դրվում են տուփի կամ արկղների մեջ այնպես, վոր նրանք չջարդվեն և պահպանեն իրենց բնական տեսքը։

Հերբարիումի նյութը պահվում է արանքները մաքուր թուղթ դրած պապկաների մեջ՝ ֆաներայի վահանների մեջ ամուր սղմած և թելով ձիգ կապած։

Եքսպոնատները պահում են չոր, լավ ոդափոխվող չենքերում, կախած դրությամբ։

ՅՈՒՂԱԲԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) սերմնաստուգիչ լաբորատորիայի վկայականը սերմերի վորակի ու յուղի տոկոսային պարունակության մասին.

գ) ապրոբացիայի ակտը.

դ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը։

VI. ՑԵԹԵՐԱՅՈՒՂԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

1. Ցուցահանդես կարող են ներկայացվել ԽՍՀՄ-ում մշակվող բոլոր յեթերայուղային բույսերի եքսպոնատները:

2. Եքսպոնատները ներկայացվում են սերմով, առանձին բույսերով, նրանց մասերով, ծաղիկներով, ինչպես նաև ապրանքային հումքով:

Ծանոթություն.— Կենդանի բույսեր ներկայացվում են տնտեսության հայեցողությամբ:

ա) Ցուցահանդես ներկայացվող եքսպոնատներն իրենց վորակով պետք է լիովին բավարարեն ԽՍՀՄ ԺԿԽ Մթերումների կոմիտեյի հաստատած մթերման կոնդիցիաներին:

բ) Հերբարային նյութը պետք է պահպանած լինի իր բնական գույնը, լավ հարթված լինի, ունենա արմատային սիստեմ:

Յեթերայուղային կուլտուրաների եքսպոնատները ցուցահանդեսին ներկայացվում են հետևյալ տեսքով և քանակությամբ.

Բույսի անունը	Քանակը	
	Սերմ կգ.	Բույսեր և նրանց մասերը
1. Կրիանդր, անիս, ամին, ֆենխել	5	Հերբարիաներ 3 եկգ. Խոշոր 500-ական ոլուն 3 եկգ.
2. Մուսկատային շալֆեյ . . .	0,5	Հերբարիաներ 3 եկգ Զոհացրած ծաղիկ նմուշ 1 գգ. Հերբարիաներ 3 եկգ.
3. Ռոզմարին	0,5	Զոհացված ծաղիկներ 2 կգ. Հերբարիաներ 3 եկգ
4. Անանուխ	—	Մեծված տերև 3 կգ., խրձիկ արմատներով
5. Խորդենի, վարդ, լավանդա	—	Հերբարի 3 եկգ

Հերբարիան պետք է հավաքվի և պատրաստվի բույսերի ծաղկելու ժամանակ:

Բացի յեթերայուղային կուլտուրաների նշված եքսպոնատներից, ցուցահանդես են ներկայացվում յեթերային յուղեր և յեթերայուղային կուլտուրաների վերամշակման այլ արդյունքներ:

11-23749գ

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Եքսպոնատները պետք է պահպանվեն այսպես.

ա) Հերբարային նյութը պահպանվում է չոր տեղում, մաքուր թղթեր ներդրված պապկաներում, սղմված յերկու ֆաներային վահանակներով և թելով պինդ կապած: Հերբարիաները պետք է պաշտպանված լինեն վնասատուներից.

բ) ապրանքների նմուշները խնամքով դարսվում են արկղների մեջ (յուրաքանչյուր սորտն առանձին արկղում) այնպես, վոր նրանք պահպանեն իրենց նորմալ տեսքը: Պատրաստված եքսպոնատները (ամբողջ բույսեր և նրանց մասերը) փաթաթվում են թղթի մեջ.

գ) սերմնանյութը պահպանվում է պինդ քաթանե տոպրակներում.

դ) դրանք պետք է պահպանել չոր, ողափոխվող շենքերում.

ե) եքսպոնատին պետք է կցել (կամ դնել տարայի մեջ) պիտակ՝ նշելով կուլտուրան, սորտը և տնտեսության հասցեն:

ՑԵԹԵՐԱՅՈՒՂԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) սերմնաստուգիչ լաբորատորիայի վկայականը սերմերի վորակի և յուղի տոկոսային պարունակության մասին.

գ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը եքսպոնատը վարակված չլինելու մասին:

VII. ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Ցուցահանդես կարող են ներկայացվել ԽՍՀՄ-ում մշակվող բոլոր դեղաբույսերի եքսպոնատները:

Եքսպոնատ կարող են լինել սերմերը, խրձերը, հերբարիաները, ապրանքային նմուշները:

Մշակվող դեղաբույսերի եքսպոնատները ցուցահանդես են ներկայացվում հետևյալ քանակությամբ

№ № ըստ կարգի	Բույսերի անունը	Եքսպոնատների անունը	Քաշակը: Կշիռը (կգ.)	Քանակը (հատ.)
1.	Կամֆորային բազիլիկ	ա) սերմեր	0,2	—
		բ) հերբարային նմուշներ	—	3
		գ) խուրձեր	—	2
		դ) ծեծված տերև	0 5	—
		ե) յուղ	0,5	—
		զ) հում կամֆորա	0,25	—
2.	Դալմաթական յերիցուկ	ա) սերմեր	0,2	—
		բ) հերբարային նմուշներ	—	3
		գ) ապրանքային նմուշներ	0,3	—
3.	Արջախաղող (բելլադոննա)	ա) սերմեր	0,2	—
		բ) արմատներ (10-ական կապեր)	—	3
		գ) հերբարային նմուշներ	0 5	—
4.	Դեղին մատնեխունկ	ա) սերմեր	0,2	—
		բ) ծիրանագույն մատնեխունկի հերբարային նմուշներ	—	3
		գ) ապրանքային նմուշներ	0 5	—
5.	Դեղատնային շալֆեյ	ա) սերմեր	0 2	—
		բ) հերբարային նմուշներ	—	3
		գ) ապրանքային նմուշներ	0,4	—
6.	Վալերիան	ա) սերմեր	0,2	—
		բ) հերբարային նմուշներ	—	3
		գ) ապրանքային նմուշներ	0,5	—
7.	Անանուխ (մենտոլային)	ա) հերբարային նմուշներ	—	3
		բ) պատռած տերև	0,5	—
8.	Խավրծիլ (ревень)	ա) սերմեր	0.2	—
		բ) ապրանքային նմուշներ	0,5	—
		գ) հերբարային նմուշներ	—	3

Դեղաբույսերի եքսպոնատները վորակով լրիվ պետք է համապատասխանեն մթերումների վերաբերյալ ԽՍՀՄ ԺԿԽ Մթերման Կոմիտեյի հաստատած պայմաններին, պետական ստանդարտի կամ հայրենի ֆարմակոպեային:

Հերբարիումի նյութը պետք է պահպանի իր բնական գույնը, լավ կարգի բերված լինի, ունենա արմատային սիստեմ և քաղված ու պատրաստված լինի բույսի ծաղկելու շրջանում:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Եքսպոնատները պետք է պահպանել հետևյալ ձևով.

ա) հերբարիումի նյութը պահվում է չոր տեղ, մաքուր թղթի միջադիրներով պապկայի մեջ, ֆաներայի յերկու վահանակներով սղմած ու չպագատով ամուր կապած.

բ) ապրանքային նմուշները լավ դասավորվում են տուփերի մեջ (յուրաքանչյուր սորտն առանձին տուփի մեջ) այնպես, վոր նմուշները չջարդվեն և պահպանեն իրենց բնական տեսքը.

գ) սերմանյութը պահվում է խիտ գործվածքից պատրաստած պարկիկների մեջ.

դ) եքսպոնատին պետք է կցել (կամ տարայի մեջ դնել) պիտակ, նշելով կուլտուրան, սորտը և տնտեսության հասցեն:

ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտ,

բ) սերմստուգող լաբորատորիայի վկայականը սերմերի վորակի մասին,

գ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ եքսպոնատների վրա կարանտինային վնասատուների,

հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

VIII. ԾԽԱԽՈՏ ՑԵՎ ՄԱԽՈՐԿԱ

ԾԽԱԽՈՏ

Ծխախոտի եքսպոնատները ներկայացվում են հակերով, փնջերով, թելաշարերով, կապերով, և կոթունները չկապած փնջերով (ստոսներով), նույնպես և հերբարային որինակների ձևով:

Դեղին, սիգարային ծխախոտների և բակունների հակերը ներկայացվում են 3 հատ՝ 1-ական հատ 1-ին, 2-րդ և 3-րդ ապրանքային տեսակներից՝ մշակված այս սորտերի համար սահմանված ստանդարտների պահանջների համապատասխան:

Դեղին ծխախոտների հակերի մեծությունը պետք է լինի բուսաբանական սորտի համապատասխան (մեծատերև կամ մանրատերև) 40-60 սանտիմետր յերկարությամբ, 25-30 սանտիմետր բարձրությամբ:

Սիգարային ծխախոտների հակերի մեծությունը պետք է մոտավորապես ստանդարտ հակերի 1/10-ի չափ լինի:

Սիգարային դեղին ծխախոտների թելաշարերը ներկայացվում են անկախ ծխախոտի մշակման յեղանակից 5 հատ՝ վերին կամ միջին տերևներից, լավ սորտավորված, համապատասխան առաջին և յերկրորդ ապրանքային տեսակների ստանդարտի պահանջներին:

Թելաշարերը պետք է ունենան 5,6 մետր յերկարություն:

Ստոսի կապերը ներկայացվում են 30 հատ՝ 15-ական հատ 1-ին և 2-րդ ապրանքային սորտերից:

Ծխախոտի եքսպոնատները մշակելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ կանոններով.

ա) Ծխախոտի մշակումը պետք է կատարվի ցերեկվա լույսով.

բ) հակերը, թելաշարերը, կապերը պետք է կազմված լինեն մի բուսաբանական սորտի և մի տեսակ չորացրած չֆերմենտած ծխախոտի տերևներից.

գ) փնջերը կամ կապերը հակերի մեջ պետք է հավաքված լինեն մի տեսակ չափի և ինամքով դարսված ստանդարտի պահանջների համաձայն.

դ) հակի վերին ու ներքին փայտերի տակ հակի ամբողջ յերկարությամբ ու լայնությամբ պետք է դրվեն նոր կոշտ կտավի հավասար չերտեր. հակերի փայտերը պետք է լինեն չոր ու մաքուր, առանց վորևե մակադրության.

յե) թելաշարերը, փնջերը և կապերը պետք է ներկայացված լինեն այնպիսի տերևներից, վորոնք խնամքով հավաքված են ըստ բույսի վրա ունեցած դիրքի, մեծության, վորը տիպիկ է տվյալ բուսաբանական սորտի համար, ըստ դույնի, վոր միապաղաղ ու տիպիկ է չորացման տվյալ յեղանակի՝ արևային, կիսաչորացման կամ կրակով չորացման յեղանակի համար.

զ) Ծխախոտի հակերը պատրաստվելուց հետ պետք է ֆերմենտացվեն ֆերմենտատորի հատուկ հսկողությամբ Սոյուզ-տաբակսիրյոյի ֆերմենտացիոն գործարանում.

է) եքսպոնատների մեջ ծխախոտի խոնավությունը 16-18 տոկոսից ավել չպիտի լինի:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ծխախոտի եքսպոնատները հակերով, թելաշարերով, փնջերով, խրձերով, կապերով և այլն պետք է պահպանվեն մաքուր, փակ, չոր ու չտաքացվող շենքում:

Ցուցահանդեսի համար եքսպոնատները պատրաստվում են յերկու կոմպլեկտից, վորոնցից մեկը՝ մյուսը փչանալու դեպքում՝ հանդիսանում է պահեստի:

Վճռականապես արգելվում է այդ շենքերում միաժամանակ պահել վորևե խոնավ, հոտավետ և կեղտոտող նյութ ու մթերք:

Թելաչար ծխախոտը պետք է պահպանել կախված դրությամբ՝ դռներից ու լուսամուտներից հեռու:

Շենքի մեջ հակերը պետք է դնել պատվանդանների վրա, դրանք դասավորելով շարքերով և դրանց միջև անցքեր թողնելով: Հակը պետք է դնել փայտերի ծայրերի վրա:

Ծխախոտի փնջերը, ատոսները պետք է պահպանել միջադիր թղթերով:

Ծխախոտի փնջերի տերևակոթերի վրա բորբոս յերևալու դեպքում անհրաժեշտ է բորբոսնած հակերը կամ մախորկայի կապերն անջատել առողջներից, պարզ յեղանակին չորացնել քամու առաջ, բորբոսն զգուշությամբ վրայից թափելով փափուկ մաքուր լաթով, փափուկ վրձինով կամ խոզանակով, փնջերը և կապերը պետք է ուղարկելուց առաջ փաթաթել թղթի մեջ (ցանկալի յե պերգամենտի) և սեղմ դարսել չոր մաքուր արկղի մեջ: Արկղի ազատ տեղերը լցվում են տորոված թղթերով:

Ծխախոտի թելաչարերը պետք է սեղմ դարսել (բայց չմամլել) մաքուր, չոր արկղի մեջ, վորի ներսը խնամքով թուղթ է փաթաթված:

Ծխախոտի հակերը փայտերից բարձր պետք է չորս կողմից կարված լինեն կոշտ քաթանի մեջ և դրված չոր արկղի մեջ: Արկղի միջի ազատ տեղերը պետք է տորոված թուղթ լցնել:

Արկղները պետք է շինված լինեն հակի մեծությամբ, վորպեսզի հակերը տեղափոխելիս չկպչեն և չհարվեն արկղների պատերին:

Սերմանյութը կարվում է պինդ քաթանե տոպրակների մեջ: Յուրաքանչյուր եքսպոնատի՝ հակի, փնջի, ատոսի, խրձի, կապի և այլն պետք է ֆաներից կամ կարտոնից պիտակ ամրացնել, վորի վրա պարզ պետք է դրել կոլտնտեսության կամ խորհտնտեսության անունը, բուսաբանական տեսակը և ապրանքային ասորտիմենտի համարը:

ԾԽԱԽՈՏԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) վկայական սերմերի վորակի մասին (սերտիֆիկատ), տրված ծխախոտի և մախորկայի արդյունաբերության համամիութենական ինստիտուտի (ВИТИМ) կամ տեղերի նրա ֆիլիալների ու հենակետերի կողմից.

գ) Սոյուզտաբակսիրյոյի մթերման կայանի տեղեկանքը տվյալ հումքի քանակի և ապրանքային ասորտիմենտի մասին:

IX. ԿԱՐՏՈՖԻԼ

Ցուցահանդես թույլատրվում է ներկայացնել ԽՍՀՄ-ում մշակվող բոլոր սորտի կարտոֆիլների եքսպոնատներ 1937 և 1938 թվերի բերքերից:

Կարտոֆիլի պալարները ներկայացվում են՝ 100 պալար միջակներից և 50 պալար՝ բերքահավաքի ժամանակ ընտրված ավելի մեծերից:

Կարտոֆիլը միատեսակ պիտի լինի և ուրիշ սորտերի հետ չխառնված:

Վնասատուներից, հիվանդություններից վնասված կարտոֆիլները ցուցահանդես չեն թույլատրվում:

Կարտոֆիլը համաչափ պիտի լինի և համապատասխանի առաջին կարգի համար պետական ստանդարտով սահմանված պահանջներին:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ցուցահանդեսի համար 1937 թվի բերքից իրրև եքսպոնատ նախատեսված կարտոֆիլը տնտեսու-

թյուններում պահպանվում է բանջարեղենի պահեստներում 1–2° ջերմության մեջ, հատուկ արկղներում, վորոնց հատակը և պատերը տախտակների միջև պետք է ունենան 1–2 սանտիմետր լուսանցք: Կարտոֆիլը դարսվում է շարքերով և շերտ առ շերտ վրան ածվում 2–3 սանտիմետր ավազ: Վերցվում է մաքուր և անպայման չիկացրած ավազ վոչ ավելի, քան 20 տոկոս խոնավությամբ:

Կարտոֆիլը պահպանելու համար պահեստ պետք է տանել ցուցահանդեսին ներկայացնելու համար պահանջվող քանակի չեռակի չափից վոչ պակաս:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

գ) ագրոբացիայի ակտը:

դ) տեղեկանք ոսլայնության մասին՝ գործարանից կամ ագրոքիմիական լաբորատորիայից (տեխնիկական սորտերի համար):

X. ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Բանջարանոցային և բոստանային կուլտուրաների եքսպոնատները ներկայացվում են թարմ ու վերամշակված ձևով, ինչպես և սերմերի ու տնկանյութի ձևով:

Բանջարեղենի եքսպոնատները ներկայացվում են թարմ վիճակում հետևյալ քանակությամբ.

Ճմերուկ, սեխ, դդմիկ, պատիսսոններ	10–ական հատ
Դդում	5 » »
Գլխակաղամբ և գոնդեղ	10 » »
Ձինական, Բրյուսելի, սավոյան և կոլրաբի ծաղկակաղամբ	20–ական հատ
Արտիչոկ, սոխ–պորրեյ	20 » »
Ուտելու յեղիպտացորեն, բաղրջան, տաքդեղ, արմատապտուղներ	50–ական հատ
Լոբազգիներ, սիսեռ, լոբի թիակի աստիճանում, սպանաղ, սալաթ, սալաթի ցիկորի ու այլ բանջարեղեն	3–ական կիլոգրամ
Տոմատներ	16 » »
Սխտոր, գլուխ սոխ մեծ ու մանր	10 » »
Բողկ, սամիթ, ծնեբակ, թարխուն, Խավրծիլ	20–ական կապ
Վարունգ	50 հատ

Եքսպոնատները ներկայացվում են ցուցահանդեսի բացման ժամանակ յեղած ջերմոցներից, իսկ հետագայում՝ աշնան արտադրանքից:

Բանջարանոցային և բոստանային կուլտուրաների վերամշակված եքսպոնատները կարող են ներկայացվել հետևյալ քանակությամբ.

Աղած վարունգ, տոմատ	16 կիլոգրամ
» ճմերուկ	25 »
Թթու կաղամբ	16 »
Տոմատ պյուրե և պաստեղ	5–ական կիլոգրամ
Ճմերուկի մեղր	5 » »
Ջոր սեխ	5 » »
Ջոր սիսեռ	3 » »
Թթու դրած բանջարեղեն	5 » »

Սերմնաբուծական ցանքեր ունեցող տնտեսությունների եքսպոնատները ներկայացվում են հետևյալ քանակությամբ.

Բոստանային կուլտուրաների սերմեր 4-ական կգ
Լոբազգիներ » » 8 » »
Բանջարանոցային » » 1 » »

Սերմնաբուծական տնտեսությունները սերմերի եքսպոնատների հետ միասին ներկայացնում են այդ սերմերից աճեցված արտադրանքի նմուշներ:

Սերմերը հասունացած պիտի լինեն, լավ սորտավորված և վնասատուներով ու հիվանդություններով չվարակված:

Սածիլները ներկայացվում են բույսերի հերթաբաց-ված եկզեմպլյարների ձևով ամեն տեսակից մեկ-յերկու հատ:

Ծայրահեղ հյուսիսի շրջանների համար Հյուս. Ծովային ճանապարհի գլխավոր վարչության գործունեության գոտում առանձին դեպքերում, նայած տեղական պայմաններին և փոխադրման յեղանակներին, թույլատրվում է նշված նորմաներից 50 տոկոսով պակաս կշռով և քանակով բնական եքսպոնատներ (բանջարանոցային կուլտուրաներ կամ պտուղներ ու թփապտուղներ:

Զոկված բանջարեղենն ու բոստանային կուլտուրաները պետք է համապատասխանեն առաջին սորտի համար մթերման ստանդարտներով նշանակված վորակին:

ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄՆ ՈՒ ՈՒՂԱՐԿՈՒՄԸ

Թարմ վիճակում ցուցահանդես ուղարկվող բանջարեղենի եքսպոնատները դարսվում են նոր տարայի մեջ, վորը մթերքներն ապահովում է մեխանիկական վնասումներից և ճանապարհին փչանալուց:

Ձմերուկը, սեխը, դդումը, կաղամբը, վարունգը, տոմատը, սոխը, սխտորը և արմատապտուղները դարսվում են ցանցարկղներում, թղթի մեջ փաթաթած և մանր, փափուկ տաշեղով շերտադարսված:

Լոբազգիները, մատաղ կանաչապատ արմատները

և կանաչը փաթեթվում են մաղերի մեջ: Բոլոր կուլտուրաների սերմերը՝ պինդ քաթանե տոպրակների մեջ:

Թարմ վիճակում եքսպոնատների տեղափոխումը պետք է կատարվի, պահպանելով շուտ փչացող բեռների տեղափոխման կանոնները:

Տոմատը և սեխն ուղարկվում են կիսահաս դրությամբ, նկատի ունենալով, վոր նրանք ճանապարհին լրիվ կհասունանան:

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

գ) սորտային վկայականի պատճենը (սերմնաբուծական տնտեսությունների համար):

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Բանջարանոցային և բոստանային կուլտուրաների եքսպոնատները (նմուշները) թարմ վիճակում ներկայացվում են 1938 թվի բերքից: Մինչև Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի բացումը, 1937 թվի բերքից կարող են պահվել չաղգամը, արմատապտուղները (գազարը, ճակնդեղը, տարեկան բողկը, գոնդեղը) և ուշահաս կաղամբը:

ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տնկելու մանր սոխը և չաղգամը պահեստում պահելու համար վերցվում են փրերով և փրերը միմյանց հետ հյուսում: Արմատապտուղների փրերը բերքահա-

վաքից հետո գլխի հավասարությամբ կտրում են (սերմացուի համար տերևակոթերը թողնվում են 1 սմ-ից վոչ բարձր)։ Կաղամբը պահպանության համար վերցվում է գլխի վրա յեղած բոլոր տերևներով, կաղամբացողունով և արմատներով։ Մաքրվում են միայն բաց, չմիացած տերևները։

Ակնհայտ է, վոր ընտրված բոլոր եքսպոնատները չպետք է ունենան վնասվածքի վորևե հետք (վնասատուներից, հիվանդություններից, ջարդվելուց, կտրվածքներից և այլն)։

Վերոհիշյալ թարմ բանջարեղենների եքսպոնատները պահեստ են դրվում վոչ պակաս, քան ցուցահանդեսին ներկայացնելու համար պահանջվող քանակի յերակի չափով։

ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Բանջարեղենների եքսպոնատները աշնանը և ձմեռը պահվում են մասնագիտացրած հատուկ պահեստներում՝ համապատասխան յուրաքանչյուր կուլտուրայի (կաղամբը՝ կաղամբապահեստներում, սոխը՝ սոխապահեստներում և այլն) ռեժիմին (ջերմաստիճանը, խոնավությունը)։ Չի կարելի տարբեր կանաչեղենը պահել մի բանջարապահեստում։ Եքսպոնատները ձմեռը պահվում են այն սովորական մեթոդներով, վոր կիրառվում են սերմացուները պահելու համար։

Բանջարաբուծական տնտեսության ինստիտուտի փորձերի համաձայն՝ դաղարը լավ է պահպանվում աուտոկոնսերվացնելու մեթոդով (խուլ ամաններում (տարա) — տակառներում կամ արկղներում), արանքներն ավազ լցնելով։ Այդ միջոցը կարելի յե հանձնարարել դաղարի և այլ արմատապտուղների եքսպոնատները պահպանելու համար՝ ձմեռվա, մանավանդ դարնան, ամառային շրջանում։

Արկղները կամ տակառները պետք է նոր լինեն և լավ չորացրած։ Ավազը վերցվում է մաքուրը — գործածության մեջ չեղածը և քիչ խոնավը (14–15% խոնավություն)։

Տակառը կամ արկղն այնքան է լցվում, վոր կաֆիարիչը մեխելիս արմատապտուղները չվնասվեն։ Յանկալի յե կափարիչի կենտրոնում ունենալ 2–1½ սմ տրամագծով փոքր անցք և նրա միջով տակառի ներսն իջեցնել մետաղե կամ ապակե խողովակ (նույն տրամագծի)՝ նրա մեջը ջերմաչափ իջեցնելու համար։ Ջերմաստիճանը չափելուց ազատ ժամանակներն այդ խողովակն ամուր խցանով ծածկվում է։

Արմատապտուղները խուլ տարայի մեջ են դրվում, յերբ պահեստում ջերմաստիճանը կիջնի և մոտ կլինի նորմալ 2–3° ջերմության։

Տնկելու մանր սոխի եքսպոնատները (վոր տնկելու համար չի գործադրվելու) լավ չորացնելուց հետո ձմեռը դնում են սոխապահեստ մոտ 0° միջին ցածր ջերմաստիճանում պահելու համար՝ — 1 և +2°-ից վոչ ավելի տատանումներով։

Այն շրջաններում, վորտեղ կլիմայական պայմանների պատճառով պահեստներում չի կարելի ստեղծել ցածր ջերմաստիճան, տնկելու մանր սոխի եքսպոնատները, ձմեռը և ամառվա շրջանում թույլատրվում է պահել 18–20° ջերմաստիճանի և 70–75% հարաբերական խոնավության պայմաններում։

Այդպիսի ջերմաստիճանի պայմաններում ամառ ժամանակ կարելի յե պահել և գլուխ սոխը։ Սակայն պետք է նկատի ունենալ, վոր սոխարմատներն այդ ժամանակ խիստ կցամաքեն, ծավալով կփոքրանան և քաշերը կը պակասի։

ԳԱՐՆԱՆ ՅԵՎ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Գարնանային ձյունահալքն սկսվելիս, մանավանդ ամառվա շրջանում, բանջարեղենը սովորական պահեստներում պահելը կդժվարանա։ Անհրաժեշտ է դեռ աշնանից նախատեսել՝ յուր տնտեսությունում ցածր ջերմաստիճաններ ստեղծելու հնարավորությունը (սառցանոցներ, նկուղներ և պահեստարաններ, ձյունապահեստներ) կամ եքսպոնատները տեղափոխել սառնարանների կամերաները։

I. Սառցանոցի համար պետք է ընտրել արտաքին ջերմության մուտքը լավ մեկուսացնող կտուրով շենք։ Սառցանոցը ժամանակին պետք է սառուց լցնել, այն ծածկել թեփով կամ նրան փոխարինող նյութով (ռանդայուշկ, տորֆի ցամքար, յեղեգ, ծղոտ, իսկ վերևից ծածկել տախտակներով (տաշված տախտակ, դարբիլ)։ Այդ՝ սառույցը կպաշտպանի հալվելուց և ծածկոցի վրա դարսված բանջարեղենը կանջատի ավելորդ խոնավությունից։ Այն դեպքերում, յերբ սառցանոցներն առաստաղ ունեն և նրա վերը մթերապահեստ է, սառցի յերեսը կարելի յե չծածկել։

Սառցանոցի կտուրը պետք է վերանորոգել և լավ մեկուսացնել աշնանից։ Գարնանը լրացուցիչ ծածկվում է ծղոտով, թեփով և դրանց նման այլ նյութով։

II. Պահեստներում պահեստամասերը կարելի յե սառեցնել նրանց կողքերին գրպաններ շինելով և սառույց լցնելով։ Վերցվում է բոլոր կողմերից միապաղաղ տախտակով պատած մի պահեստամաս (միջանցքի կողմից պատը չարժական է), նրա չուրջը 0,75 մ վոչ պակաս տարածության վրա տախտակներից շինվում է նույնպիսի միապաղաղ ցանկապատ (միայն անցք է թողնվում մի մարդու անցնելու համար)։ Պահեստամասերի չուրջն այդ ձևով շինված ցանկապատ-գրպանների մեջ գարնանը սառուց է լցվում։ Արտաքին կողմից գրպանները պետք է ծածկել փալաներով կամ թեփով, ծղոտով և դրանց նման նյութով։ Բացի գրպանները լցնելուց, սառցի առանձին պաշար է պատրաստվում և կարիքի դեպքում գրպանները սառուց է ավելացվում։ Ամառ ժամանակ սառուց լցնելիս վրան պետք է աղ ավելացնել։ Գրպաններում յուրաքանչյուր մի տոկոս աղը (սառցի քաշի) ջերմաստիճանն իջեցնում է մոտավորապես 3-ի 0,5°-ով։

Դրա համար էլ, վորքան պահեստը տաք է, այնքան ավելի աղ պիտի տալ։ Գրպանների ներսի և դրսի կողմերից պետք է ջրտար առվակներ շինվեն դեպի ընդհանուր ջրահավաք առվակը, վորպեսզի պահեստի հատակին ջուրը բոլորովին չկանգնի։

III. Սառցարաններում պետք է վերցնել այնպիսի կամերաներ, վորոնցում ապահովված է 0 ջերմաստիճանը (թուլյատրելի չեղումները — 1-ից մինչև +2°)։

Յեթե ձմեռային պահեստներում ջերմությունը +3°-ի սահմաններից ավելի յե բարձրանում, բանջարեղենի եքսպոնատները պետք է տեղափոխել սառնարանի կամերաները կամ այնպիսի շենք, վորը սառցով է սառեցվում։

ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԸ ԳԱՐՆԱՆԸ ՍԱՌԵՑՎՈՂ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՁԵՎԸ

Գլուխ և մանր տնկելու սոխը հյուսված-քներով դարսվում են պլանկաներից շինված արկղների մեջ։ Թե սոխը և թե տարան — արկղը պետք է չոր լինեն։ Սոխի մեջ չպետք է լինեն ծլող-աճողներ և վնասվածներ։

Տեղափոխելու կամ մի շենքից մյուսը փոխադրելու ժամանակ անհրաժեշտ է լավ ծածկել, վոր սոխը տեղափոխության ժամանակ պաշտպանվի փոխվող ողի ազդեցությունից։ Տեղափոխությունը պետք է կատարել այնպիսի ժամանակաշրջանում, յերբ պահեստները նման ջերմաստիճան ունեն (տարբերությունը 1°-ից վոչ ավելի)։

Ձմեռային պահպանության չտարբելներից կամ պահեստամասերից արմատապտուղները վերադարձվում են ամառային պահպանության տարաների մեջ ձմեռային պահեստներում և այն շրջանում, յերբ վերջինում ջերմությունը 3-ի 2°-ում դեռ չարունակվում է։

Յեթե ձմեռն արմատապտուղները պահվել են սովորական ձևով (թարմ ողի մասնակցությամբ), ապա ամառվա համար անհրաժեշտ է նրանք դասավորել խուլ տարայի մեջ, արանքները մաքուր, գործածության մեջ չեղած ավազ լցնելով։ Դասավորում են վերը նշված մեթոդով (առուտոկոնսերվացում)։

Արմատապտղով լցված տակառները կամ արկղները պատրաստված սառեցվող շենքերն են տարվում կամ փոխադրվում արևից և անձրևից լավ պաշտպանված

վիճակում։ Գյուղատնտեսական ցուցահանդես են տարվում վերոհիշյալ տարաներով և արանքներն ավաղ լցրած։

Ուշահաս կաղամբը (ամառները կամ այլ դիմացկուն սորտը) ամառվա ընթացքում փակ շենքերում կարող է պահվել մխայն ձյունաշերտով ծածկված վիճակում*)։ Կաղամբի քանակի համապատասխան վերցվում է արկղ և ամառային սառեցվող պահեստում դրվում է մի մշտական տեղ։

Արկղի տակը լցվում է ձյուն կամ մանր կոտրատած սառույց (առանձին սառցակտորների տրամագիծը 0,5–1 սմ–ից ավելի չպետք է լինի)՝ 15–20 սմ հաստությամբ շերտով, հետո դարսվում են կաղամբի գլուխները՝ միմյանցից 5–8 սմ և արկղի պատերից 15–20 սմ հեռավորությամբ։ Ձյունը կամ մանր սառույցը այնպես է լցվում, որ բոլոր արանքները լցվեն և վերևից, կաղամբի գլուխների վրա լինի 10 սմ–ից վոչ պակաս շերտ։

Այդ ձևով կարող են դարսվել և հետևյալ շարքերը։ Վերին շարքը ծածկվում է 20 սմ հաստությամբ ձյունի շերտով կամ սառցով և վրայից ծածկվում է թեփով կամ ռանդայուշկով։ Արկղի պատերը դրսի կողմից պատում են սառցով և այնուհետև ամբողջ արկղը ծածկվում է թեփով կամ խսիրներով։ Սառցանոցներում կաղամբը դարսվում է անմիջապես սառցի վրա, արանքները սառույց կամ ձյուն լցնելով։

Ամառը պահելու համար պետք է ընտրել այն կաղամբը, որը ձմեռվա ընթացքում լավ պահպանվել է. կաղամբի գլուխը պետք է իր վրա պահպանած լինի կանաչ տերևները և աճի նշաններ ցույց չտա։ Իսկ եթե կաղամբագլուխը պատռվել է, կորցրել է իր նախկին ձևը և խտությունը, յերեսի թերթերն արմատից բաժանվել են և այլն, այդպիսի եքսպոնատները ցուցահանդեսի համար անպետք են։

---

*) Կաղամբի հազվադյուտ օրինակները հատերով պետք է պահել ֆորմալինի լուծույթի մեջ (տես 34 եջը)։

Ձյունով պատած կույտերում պահելը։— Այն շրջաններում, որտեղ բավարար ձյուն է գալիս և վորոնք, եքսպոնատները Մոսկվա (Համ. գյուղատնտ. ցուցահանդես) փոխադրելու համար 2–3 որվա տարածության վրա յեն գտնվում, կարելի յե ոգտագործել ձյունապատումը՝ բոլոր բանջարեղեն եքսպոնատների համար (տնկելու մանր սոխ և արմատապտուղներ, կաղամբ)։ Անհրաժեշտ է ընտրել արևից լավ պաշտպանված տեղ, մանավանդ հարավային կողմից (այգի, պարտեզ)։

Պաշտպանված տեղ չլինելու դեպքում պետք է վերցնել ամեն կողմից պաշտպանված սարայ կամ բանջարապահեստ։ Գարնան առաջին հալոցին, յերբ ձյունը դեռ փափուկ է և հեշտ ամրացվում է, պետք է ձեռնարկել ձյունապատման։ Բաց ոդում (այգում, պարտեզում) ընտրվում է հարթ և քիչ բարձր տեղ։

Այդ տեղերում ձյունը այնպես է տոփանվում, որ տոփանված ձյան շերտը գետնի վրա 20 սմ–ից պակաս չլինի։ Բանջարեղենը դարսվում է այդ ձյունաշերտի վրա շարքերով և արանքները ձյուն է լցվում։ Վերևից ծածկոցի ընդհանուր շերտը բոլոր կողմերից 1,5 մետրից պակաս չպիտի լինի։

Ծածկելու ժամանակ ձյունը լցվում է ներքևից և ամեն անգամ լավ տոփանվում է։ Ձյան ծածկոցը պետք է պաշտպանված լինի թեփով, մանր ռանդայուշկով, հարդով և նման նյութերով՝ 30–50 սմ հաստությունից վոչ պակաս շերտով։

Սարայներում ձյան ծածկոցի շերտը կարելի յե անել մինչև 1 մ, ծածկելով 30 սմ հաստության թեփով կամ ծղոտով։ Բանջարապահեստներում ձյան ծածկոցի շերտը կարելի յե անել մինչև 0,75 մ և թեփի շերտը՝ մինչև 10–15 սմ։

Հարավային շրջանների տնտեսությունների համար, վորոնք ձյունի կայուն շերտ և ձմեռվա յերկարատև ցրտեր չեն ունենում մի կողմից, և մյուս կողմից՝ մոտիկ սառնարաններ չունեն, կարող է հնարավորություն տրվել սոխի և արմատապտուղների արժեքավոր

եքսպոնատներն ուղարկել (փոստով, բագաժով, հատուկ սուրհանդակի միջոցով)*) փետրվարի վերջին այն հաշվով, որ նրանց հետագա պահպանումը հնարավոր լինի կազմակերպել Մոսկվայում (ձյունապատում կամ առնարաններում տեղավորելը):

Այդպիսի անտեսությունները պետք է նախորոք հայտեր տան ՌՍՖՍՀ Հողժողկոմին և միայն համաձայնություն ստանալուց հետո եքսպոնատներն ուղարկեն Հողժողկոմի նշած հասցեով:

Դդմի և ուշահաս սեխի եքսպոնատները գարնանը և ամառը կարող են պահվել նկուղային չենքերում 5–8° ջերմության և 85% հարաբերական խոնավության պայմաններում:

ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԸ ՖՈՐՄԱԼԻՆԻ ՄԵՋ ՊԱՀԵԼԸ

Բանջարեղենի հազվագյուտ որինակները ամառ ժամանակ կարող են պահվել Ֆորմալինի լուծույթի մեջ: Մաքրելուց և լվանալուց հետո բանջարեղենի այս կամ այն որինակը (մանր արմատապտուղները և սոխը վերցվում է յուրաքանչյուրից մի քանի հատ) դրվում է հղկած ապակյա խցան կամ թիթեղ ունեցող ապակե ամանի մեջ:

Վաճառքի սովորական խտության (40%) Ֆորմալինը յեռացրած և սառեցրած ջրով լուծվում է՝ 4 ծավալ Ֆորմալինին 100 ծավալ ջրի հաշվով:

Պատրաստած լուծույթը լցնում են ամանում տեղավորած բանջարեղենի վրա այնպես, որ լուծույթը 5–8 սմ բարձր կանգնի բանջարեղենի մակարդակից: Այնուհետև ամանն խնամքով ծածկվում է հղկված խցանով կամ հղկված ապակյա թիթեղով:

Ամանը ապակյա կլոր թիթեղով ծածկելիս անհրաժեշտ է վերից ամանը կապել պերգամենտի թղթով: Պերգամենտից շրջանաձև կտրվում է (ապակյա ամանի շրջագծից քիչ մեծ չափով), դրվում է ապակյա թիթեղի վրա և ամուր կապվում է, հանգույցի ցածր ծայրին ազատ թողնելով 2 սմ-ից վոչ պակաս:

*) Առանց նախազգուշացման ուղարկված եքսպոնատները չեն դնվի:

XI. ՊՏՈՒՂՆԵՐ ՅԵՎ ԹՓԱՊՏՈՒՂՆԵՐ

Ցուցահանդես կարող են ներկայացվել.

1. Ինչպես կուլտուրական սորտերի, այնպես և վայրի աճող թարմ պտուղներ և թփամրգեր:
2. Վերամշակված պտուղներ ու թփապտուղներ:
3. Ընկուզապտուղներ:
4. Տնկանյութեր և վայրատունկեր:
5. Պղատու ծառեր և թփեր:

ԹԱՐՄ ՊՏՈՒՂՆԵՐ ՅԵՎ ԹՓԱՊՏՈՒՂՆԵՐ

Պտուղների (սերմով և կորզով) ու թփապտուղների ընտրությունը կատարվում է յուրաքանչյուր սորտից առանձին՝ միջակից վոչ պակաս բերքատվությամբ տիպիկ ծառերից ու թփերից, վորոնք գտնվում են այգու տարբեր մասերում:

Պտուղները ջոկվում են առանձին-առանձին՝ հին այգիների ծառերից, մատաղ, թզուկ, ձևավոր, տարածուն ծառերից, ինչպես և բերքատվությամբ ռեկորդային ծառերից ու թփերից:

Բացի տիպիկ եկզեմպլյարներից, նմանապես ներկայացվում են պտուղների ու թփապտուղների աչքի ընկնող եկզեմպլյարներ (մեծությամբ, վորակով, կըշռով, համով, գույնով և այլն), նկարագրելով այն ծառերն ու թփերը, վորոնցից քաղված են այդ պտուղները:

Պտուղներն ու թփապտուղները տիպիկ պիտի լինեն տվյալ սորտի համար, լրիվ զարգացած, հասունությամբ համաչափ, ամբողջական պտղարմատով (բացի ծիրանից ու դեղձից), չվնասված վոչ վնասատուներից,

վոչ եվ հիվանդություններից, ավյալ սորտի հասունության հատուկ դույնով:

Եքսպոնատները հավաքվում են ըստ հասունության, վորն ապահովում է նրանց տեղափոխումը ցուցահանդես և առավել յերկար պահպանումը:

Պտուղներն ու թփապտուղները ներկայացվում են բարձր և առաջին սորտից:

ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾՆԵՐ, ՁՈՐ ՄՐԳԵՐ

Վերամշակված տեսակներից կարող են ներկայացվել· չորացրած ու թառամեցրած պտուղներ և թփամրգեր, մուրաբա, մրգի կոմպոտներ, պավիդլո, պաստեղներ, մարմելադ, մրգախմիչքներ, բնահյութեր, պտղի և թփամրգի եքստրակտներ, գինիներ և այլն:

Ցուցահանդես ներկայացվող վերամշակված պրտուղներն ու թփապտուղները կարող են պատրաստված լինել դործարանային և տնային յեղանակով:

Վերամշակված պտուղներն ու թփապտուղները պետք է բավարարեն ստանդարտների առաջադրած բոլոր պահանջներին:

ԸՆԿՈՒԶԱՊՏՈՒՂՆԵՐ

Ինչպես կուլտուրական, այնպես եվ անտառային բոլոր տեսակի ու սորտի ընկուզները ներկայացվում են կեղևով և մաքրած (առանց կեղևի) յուրաքանչյուր սորտից 5 կիլոդրամ:

ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԿՇԻՌՆ ՈՒ ՓԱԹԵԹՈՒՄԸ

Ուղարկվող եքսպոնատների կշիռը վորոշվում է ստանդարտային տարայի տիպով:

Ցուցահանդես պետք է ներկայացնել յուրաքանչյուր սորտից հետևյալ քանակությամբ եքսպոնատներ· սերմավորներից 32-ից մինչև 48 կիլոդրամ, կորզավորներից 10-ից մինչև 20 կիլոդրամ և թփապտուղներից 10 կիլոդրամ:

Ծայրահեղ հյուսիսի համար թույլատրվում է բնական եքսպոնատների կշիռն ու քանակը նվազեցնել:

Խնձորը, տանձն ու սերկեվիլը ներկայացվում են յուրաքանչյուր սորտից 2-ական արկղ:

Ձմեռվա պահունի խնձորից ջոկվում է 4 արկղ:

Նոր մշակված սորտի պտղատու ծառերի և թփերի, տեղական հայտաբերված արժեքավոր ձևերի յեղակի եկզեմպլյարների նմուշների ընտրությունը կատարվում է թփերից՝ ամբողջ թփի առաջին բերքը, իսկ պտղատու ծառերից՝ տիպիկ պտուղները, սերմավորներից՝ վոչ պակաս, քան 5 կիլոդրամ և կորզավորներից՝ 2 կիլոդրամ:

Պտուղներն ու թփապտուղները դարսվում են ստանդարտ տարայի մեջ պետական ստանդարտի բոլոր կանոնների համապատասխան:

Ցեռանկյունի արկղների մեջ փաթեթումը թույլատրվում է բացառիկ դեպքերում:

Լիցքով և հարդ, խոտ ու կոպիտ տաշեղներ միջադրած փաթեթում չի թույլատրվում:

Զանազան սորտի և զանազան մեծության պտուղները մի տարայով ուղարկել չի թույլատրվում:

Առանձին փորձարարների պտուղներն ու թփապտուղները ներկայացվում են ուղած տարայով, վորն ապահովի եքսպոնատների պահպանումն ու տեղ հասցնելը:

Բոլոր չոր մրգերը ներկայացվում են 5 կիլոդրամ քանակով՝ արկղներում:

Հյութերը ներկայացվում են կաղնեփայտի տակառիկներով 10 լիտր տարողությամբ կամ լցված ապակե ջրերի մեջ նույն քանակությամբ:

Ամեն տեսակի մուրաբաները ներկայացվում են ապակե ստանդարտ ամաններում 2 կիլոգրամ կշռով:

Պտուղների ու թփամրգերի սորտավորումն ու փաթեթումը կատարվում է մասնագետների հսկողությամբ:

Ուղարկվող եքսպոնատի յուրաքանչյուր արկղի վրա չջնջվող ներկով պետք է նշված լինի.

ա) տնտեսության (ուղարկողի) անունը և հասցեն,

բ) պտուղների տեսակը, սորտը և թիվը,

գ) զուտ քաշը (նետտո):

ՊՏՈՒՂՆԵՐԻ ՈՒ ՁՈՐ ՄՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված պտուղները պահվում են մաքուր, չոր, ախտահանված, մութ շենքերում, վորոնք լավ ոդափոխվում են և վորոնց ջերմաստիճանն ու հարաբերական խոնավությունն է.

	Ջերմաստիճ. ըստ C	Հարաբերական խոնավութ. 85%
Խնձոր, տանձ և այլն	0-ից մինչև +1°	85%
Ձոր մրգեր	+3-ից մինչև +15°	70-75%-ից վոչ ավելի
Սև սալոր, թուզ	+3°-ից վոչ ավելի	85% » »
Հյութեր	0-ից մինչև +2°	85% » »
Գավի լո	10°-ից վոչ ավելի	80% » »
Մուրաբա	+6-ից մինչև +10°	80% » »

1937 թվի բերքից յերկար չդիմացող պտուղները չի թույլատրվում պահպանել ձմեռը: Այդ պտուղներն ընտրվում են միայն 1938 թվի բերքից:

ՎԱՅՐԱՏՈՒՆԿ ՑԵՎ ՏՆԿԱՆՑՈՒԹ

Տնկարաններից վայրատունկերն ու տնկանյութերը ներկայացվում են բարձր և առաջին սորտի, համաձայն ստանդարտի, ըստ տեսակի ու ցեղի հետևյալ քանակով.

ա) վայրատունկ	20 հատ
բ) տնկանյութ	10 հատ:

Պտղատու ծառերի և թփերի եքսպոնատները ներկայացվում են ցուցահանդեսի միայն ցուցահանդեսի կոմիտեի համաձայնությամբ:

ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

1) սորտի նկարագրությունը,

2) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

Սորտի նկարագրության և ակտի պատճենները միաժամանակ ուղարկվում են Ցուցահանդեսի կոմիտեի հասցեով:

Եքսպոնատներ ուղարկող տնտեսության ադրեսատերը պետք է վաղորոք ուղարկել Ցուցահանդեսի կոմիտեին:

XII. ԽԱՂՈՂ

Ցուցահանդես կարող են ներկայացվել ամեն սորտի ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված խաղող:

Խաղողն ընտրվում է ամենից բարձր բերք տված հողամասերից, ընդվորում հավաքված խաղողի ընդհանուր քանակից ընտրվում են տվյալ սորտի համար տիպիկ լավագույն վողկույզներ:

Խաղողի վողկույզները պետք է լինեն ամբողջական, մաքուր, վնասատուներից և հիվանդություններից չվնասված, ունենան միջակ խտություն տվյալ սորտի համար և համաչափ դույն: Պտուղները պետք է ամուր նստած լինեն պտղահիմքի վրա, կատարը առաձիգ լինի, չժանգոտած և չբորբոսնած:

Խաղողը քաղվում է յուրաքանչյուր սորտի համար նորմալ հասունության ժամանակ, վորն ապահովում է առավելագույն պահպանումը տեղափոխելիս և ցուցահանդեսում պահելիս:

Թարմ խաղողը ներկայացվում է յուրաքանչյուր սորտից 20 կիլոգրամ:

Առանձին դեպքերում Ցուցահանդեսի կոմիտեյի համաձայնությամբ և նրա ցուցումով կարող են ներկայացվել խաղողի թփեր, տնկանյութ և կտրված վորթեր իրենց վողկույզներով:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՑԵՎ ՓԱԹԵԹՈՒՄԸ

Խաղողը փաթեթվում է մինչև 5 կիլոգրամ տանող մաղերի կամ մինչև 8 կիլոգրամ տանող արկղների մեջ: Մի մաղի կամ արկղի մեջ միքանի սորտ տեղափոխելն արգելվում է: Խաղողը դարսվում է շարքերով, քիպ կպած, կատարները ներս: Խաղողի փաթեթումն ու ուղարկումը պետք է կատարվի քաղելու որվա ընթացքում: Արգելվում է քաղել խոնավ խաղողը և փաթեթել:

Ցերկար ժամանակ պահելու խաղողն արկղների մեջ փաթեթելիս վրան չաղ են տալիս չոր խցանի մանրուք, բրնձի թեփ կամ տորֆի փոշի:

Առանձին փորձարարների խաղողը ներկայացվում է ուղած քանակով և ուղած տարայով, վորն ապահովի եքսպոնատների պահպանումը, ընդվորում յուրաքանչյուր սորտի վողկույզներին պետք է ամրացնել սորտի անունը կրող պիտակ:

ԽԱՂՈՂԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Խաղողի վերամշակման արդյունքներից ցուցահանդես կարող են ներկայացվել.

1. Խաղողի մաքուր գինիներ վորևե տարվա կուպաժից:

2. Գինու վերամշակման արդյունքներ (կոնյակի սպիրտ, կոնյակ և այլն):

3. Գինեգործության թափուկների ողտագործումից ստացված և մառանային տնտեսության արդյունքներ (գինեթթու կիր, գինեքարի թթու, ռեկտիֆիկած սպիրտ և այլն):

4. Անալկոհոլ վերամշակման արդյունքներ (գինու հյութ, վակուում-ջեջ, դոշաբ, կոմպոտներ, մուրաբա, մարինադներ և այլն):

5. Զոր խաղող (չամիչ):

Վերամշակման արդյունքները ցուցահանդես են ներկայացվում հետևյալ քանակությամբ.

1) Խաղողի գինիներ, կոնյակ, սպիրտ, հյութեր, վակուում-ջեջ և դոշաբ յուրաքանչյուր սորտից 30-ական լիտր: Կոլեկցիոն և փորձնական եքսպոնատները կարող են ներկայացվել պակաս քանակությամբ, բայց վոչ պակաս, քան յուրաքանչյուր սորտից 5 լիտր:

2) Խաղողի վերամշակման մնացած բոլոր արդյունքները ներկայացվում են 3 կիլոգրամ քանակով:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՑԵՎ ՓԱԹԵԹՈՒՄԸ

Խաղողի վերամշակման ընտրված արդյունքները պետք է ներկայացվեն հետևյալ փաթեթումով:

1. Խաղողի գինիներ. կոնյակ, սպիրտ, հյութեր, վակուում-ջեջ և դոշաբ — ապակե շշերում 0,75 և 0,375 լիտր տարողությամբ: Կոլեկցիոն գինիները կարող են ներկայացվել այն ամանի մեջ, վորտեղ նրանք լցված եյին կոլեկցիաները կազմելիս:

2. Կոմպոտները, մուրաբան, մարինադները ներկայացվում են ապակե, վորևե տարողությամբ, հերմետիկ փակված բանկաներում:

3. Թափուկների ողտագործումից ստացված մթերքները ներկայացվում են ապակե բանկաների մեջ հարմարեցրած խցաններով:

4. Զորացրած խաղողը (չամիչը) ներկայացվում է փայտե, չոր, ամբողջական արկղներում, ներսը թուղթ փռած:

Շշերով և բանկաներով եքսպոնատները պետք է փաթեթված լինեն փայտե արկղների մեջ, ընդվորում յուրաքանչյուր շիշ և բանկա պետք է փաթաթված լինի թղթի մեջ և դրված հարդե պատյանի, փափուկ չոր տաշեղի կամ փափուկ հարդի մեջ:

Յուրաքանչյուր արկղի կամ մաղակերպ կապի վրա չջնջվող ներկով պետք է գրել.

1) տնտեսության (ուղարկողի) անունը և հասցեն,
2) մթերքի տեսակն ու սորտը և
3) զուտ քաշը (նետտո):

ԽԱՂՈՂԻ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը.

բ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը.

գ) լաբորատորիայի վկայականը անալիզի արդյունքներով (միայն խաղողի վերամշակման արդյունքների համար):

XIII. ՍՈՒԲՏՐՈՊԻԿ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Ցուցահանդես կարող են ներկայացվել խորհրդային սուբտրոպիկ վայրերում աճող սուբտրոպիկ կուլտուրաների բոլոր տեսակները կենդանի բույսերով և պատրաստի արտադրանքով:

Ցուցահանդես ներկայացվող սուբտրոպիկ բույսերի վերջնական ընտրությունը՝ եքսպոնենտների տնտեսությունում՝ կատարում են հանրապետությունների հողժողկոմատները՝ Համամիութենական գյուղ. ցուցահանդեսի կոմիտեի կողմից ցուցահանդեսի մասնակիցների ցուցակը հաստատվելուց հետո:

ՑԻՏՐՈՒՍԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Ցիտրուսային կուլտուրաների կենդանի բույսերի եքսպոնատներն, իբրև կանոն, պետք է ներկայացվեն պտղաբեր հասակում (5 տար. և ավելի մեծ), յերբ արդեն կան ձևավորված պտուղներ կամ կոկոններ կանոնավոր և լավ թերթակալած դաղաթով:

Ծանոթություն.— Սուբտրոպիկ հաղվադյուտ կուլտուրաների՝ ավոկադոյի, անոնայի և այլոց եկզեմպլյարները, ինչպես և սելեկցիոն սորտերը կարող են ներկայացվել նաև վոչ պտղաբեր հասակում:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՓԱԹԵԹՈՒՄԸ

Բույսերի բոլոր եքսպոնատները պետք է հանվեն և վերատնկվեն համապատասխան մեծության կիսատակառների մեջ 1937 թվի աշնանը: Ուղարկելու մոմենտին բույսերը պետք է կատարելապես արմատացած լինեն և ունենան ուղիղ տերևակալած դաղաթ:

Ծանոթություն.— Արմատացման, ինչպես նաև փաթեթման և տեղափոխման մեթոդների վերաբերյալ հրահանգ տալիս են հանրապետությունների հողժողկոմատները:

XIV. ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Շերամապահության եքսպոնատները ներկայացվում են իբրև. ա) լավագույն բոժոժներ, ընտրված խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և ստախանովական շերամապահների բերքից, բ) ԽՍՀՄ-ում մշակվող թթենու լավագույն եկզեմպլյարներ:

Բոժոժների եքսպոնատները ներկայացվում են յուրաքանչյուր պարտիայից 5 կիլոգրամ նմուշով. առաջավոր շերամապահների եքսպոնատները ներկայացվում են գրենայի մի տուփից ստացած ամբողջ բերքը:

Թթենու եքսպոնատները կարող են ներկայացվել իբրև թփերի կամ բարձրաբուն ծառերի առատ բերքատու եկեղեմպլյարներ:

Թթենու եքսպոնատներից ցուցահանդես են ուղարկվում բացառապես աչքի ընկնող որինակները:

Ծանոթություն.— Ցուցահանդեսի համար նախատեսված կենդանի բույսերն ուղարկվում են միայն ԽՍՀՄ Հողժողկոմատի Շերամապահական գլխավոր վարչության պահանջով, որը պահանջի հետ միասին տեխնիկական հրահանգ է ուղարկում «կենդանի բույսերը փաթեթելու և փոխադրելու կարգի մասին»:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ցուցահանդեսի համար նախատեսված բոժոժները պետք է խեղդված լինեն, չորացված և պահպանվեն չոր ողափոխվող շենքում վոչ ավելի, քան 75% խոնավությամբ:

Բոժոժների փաթեթումը կատարվում է 0,30×0,30 ×0,40 մետր մեծության արկղներում: Բոժոժները ձևափոխվելուց պահպանելու համար արկղների մեջ դարսվում են խիտ կերպով:

Արկղների բոլոր ճեղքերը դրսից պետք է խցկվեն ձողիկներով:

ԹԹԱԴՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ագրոպասպորտը,

բ) ակտ թթենու դրության վերաբերյալ մինչև բեռնելու մոմենտը և

գ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

XV. ԱՆՏԱՌԱՏՆԿՈՒՄ

ա. ԴԱՇՏԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐ

Դաշտը պաշտպանող անտառաշերտերի եքսպոնատները կարող են ներկայացվել իբրև դաշտերում դաշտը պաշտպանող անտառաշերտերի պաշտպանության համար աճեցված գյուղատնտեսական կուլտուրաների արտադրանքի բնական նմուշներ.

ա) հատիկային կուլտուրաներ հատիկային եքսպոնատների ընտրության վերաբերյալ հրահանգի ցուցման համաձայն,

բ) բանջարանոցային և բոստանային կուլտուրաներ բանջարանոցային և բոստանային կուլտուրաների ընտրության հրահանգի համաձայն:

(Պետական և կոլտնտեսային տնկարաններ)

բ. ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Կոլտնտեսությունների և պետական տնկարանների եքսպոնատները ներկայացվում են իբրև տնկանյութի բնական նմուշներ (ծառերի սերմեր, սերմնարույս, տնկի), ինչպես նաև առանձին կենդանի բույսեր արկղներում ու հերբարիաներում: Հերբարային նմուշները պետք է դրվեն լրիվ արմատային սիստեմով ու տերևներով: Ցուցահանդես ուղարկվող բույսերի քանակն ու առաքման ժամկետները սահմանում է ԽՍՀՄ Հողժողկոմատի անտառատնկման գլխավոր վարչությունը:

1· Սերմանյութը պահել կամ մաղաղաթյա թղթի ծրարներում, կամ թե հերմետիկորեն փակվող ապակյա ամանում:

2· Սերմի եքսպոնատներն անհրաժեշտ է պահել չոր շենքերում և նրանցից այնպիսիները, որոնք դրված են ծրարների և պարկային տարաների մեջ, պահել կախված վիճակում՝ նրանք կրծողներից պաշտպանելու համար:

3· Գյուղատնտեսական ցուցահանդեսին ցուցադրելու համար ընտրված և 1938 թվին հավաքած կենդանի բույսերը հողից հանվում են Մոսկվա ուղարկելուց 5 որ առաջ և պահվում են ցուցադրողի (եքսպոնենտ) մոտ՝ հող լցրած արկղներում:

Կենդանի բույսերը պետք է ուղարկվեն այն հաշվով, որ այդ եքսպոնատները Մոսկվայում ստացվեն 1938 թ· ապրիլի 25-ից մինչև մայիսի 10-ը ժամանակաշրջանում:

4· Տնկանյութը (հերբարիզացրած — չորացրած)՝ առանձին-առանձին դրված չսոսնձած թղթի թերթերի արանք, պետք է պահվեն չոր տեղում տափակ տուփերի կամ արկղների մեջ, խուսափելով շատ խիտ դարսելուց, որովհետև ավելորդ ծանրությունից տերևները և արմատային սիստեմը (նրա նուրբ մասերը) հեշտությամբ ջարդվում են:

5· Հերբարիումի նյութի և սերմանյութի՝ վնասատու միջատներից և սնկային հիվանդություններից փչացումը կանխելու համար հանձնարարվում է յուրաքանչյուր բույսի վրա նաֆտալին կամ այլ ախտահանող փոշի ցանել:

6· Ավազում չորացրած բույսերը պետք է պահել հատուկ տուփերի կամ արկղների մեջ, յուրաքանչյուր բույսն առանձին՝ արկղի հատակին կպցրած արմատներով և ցողունով:

7· Յուրաքանչյուր եքսպոնատի պետք է պիտակ կցել եքսպոնատի բնութագրությամբ:

Եքսպոնատների վերաբերյալ կազմվում են հետևյալ փաստաթղթերը·

ա) ագրոպասպորտը,

բ) Սերմնաստուգիչ լաբորատորիայի վկայականը հատիկի ու սերմի վորակի մասին և

գ) կարանտինային տեսչության սերտիֆիկատը՝ նմուշների մեջ կարանտինային վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի բացակայության մասին, կամ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարող մասնագետների վկայականը:

XVI· ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իբր մեղրաբուծության եքսպոնատ ներկայացվում է մեղը և մոմ:

Մեղրը ցուցահանդես ներկայացվում է ինչպես մեղրահացով, նույնպես և քամած: Մոմը ներկայացվում է մշակման բոլոր ձևերով՝ արևահալած, սովորական ձևով հալած և քիմիական նյութերով հալած մոմ:

Մոմի հումքը ներկայացվում է չեչերով և մոմի տականքը (մերվա):

Արհեստական մոմաթերթի գործարանների արտադրանքի եքսպոնատները ներկայացվում են մոմի ժապավենի № № 1 և 2 կոճերով և տարբեր ձևով մշակված մոմից պատրաստած բարձրորակ մոմաթերթի ձևով:

Մեղվաբուծության արտադրանքի հետ ներկայացվում է·

ա) մեղվաբուծական ինվենտար,

բ) լավագույն ստանդարտ մասսայական արտադրանքի և վորակի մեղրի ամանեղեն:

Մեղվաբուծության եքսպոնատները պետք է բավարարեն հետևյալ պահանջները·

ա) Քամված մեղրը պետք է լինի մաքուր, բնա-

կան ծաղկամեղը և վորոշ սորտի, այսինքն՝ փեթակներից պիտի քամված լինի տվյալ մեղրատու բույսի ծաղկման շրջանում անմիջապես (լորի, սպիտակ ակացիա, հնդկացորեն, կիպրեյ կամ իվանչայ, կորնդան, մանանեխ, կարմիր և սպիտակ յերեքնուկ և այլն) և համապատասխանեն տվյալ սորտի բոլոր հատկանիշներին՝ շաքարայնությանը, գույնին և հոտին: Խառն գույների և հոտերի մեղը ընդունվում է միայն լեռնային, անտառային և մարգագետնային մեղվանոցներից, վորոնք մեղրն ստանում են բազմաթիվ, միաժամանակ ծաղկող, վայրի մեղրատու բույսերից:

բ) Մեղրահացով մեղրը (շրջանակներով, կիսաշրջանակներով, սեկցիաներով և զանազան ֆիգուրաներով) պետք է լինի բնական, բացառված լինի գլխավոր մեղրաբերքի շրջանում մեղուներին շաքարով ոժանդակ կերակրումը: Մեղրահացերը պետք է լինեն սպիտակ մոմից, կանոնավոր շինված և լրիվ կնքված: Վորդից հետո մեղը լցրած մեղրահացերը ցուցահանդես ներկայացնել չի թույլատրվում, նույնպես և չեն թույլատրվում անկանոն կառուցված մեղրահացերը:

գ) Մոմը պետք է լինի բնական գույնի, սովորական բնական հոտի, բացարձակ մաքուր և ազատ ամեն տեսակ սուրոգատներից:

դ) Մեղրի ամանեղենը և մեղվաբուծական ինվենտարը պետք է ներկայացվեն նորագույն մասսայական ստանդարտ արտադրանքի լավագույն նմուշներից: Մեղվաբուծական ինվենտարի փորձանմուշները թույլատրվում է ցուցահանդես ներկայացնել միայն այն դեպքում, յեթե նրանց կիրառման եֆեկտիվությունն արտադրությունում ստուգված է:

Բոլոր սորտերի մոմը ներկայացվում է սալիկներով՝ լայնությունը և հաստությունը 4 սմ, յերկարությունը՝ 32 սմ: Մոմաչեչերը ներկայացվում են սովորական բներով և մագազինի շրջանակներով և սեկցիաներով: Մոմահումքը մամլած չեչերի և մոմի տականքի ձևով ներկայացվում է սովորական և քիմիական

նյութերով հալող գործարաններին հանձնելու համար ընդունված փաթեթման նմուշների ձևով: Արհեստական մոմաթերթը ներկայացվում է «Վիդա» մեքենայի բոլոր յերեք աղրեգատներից ստացվածը՝ միայն բարձր վորակի, ինչպես սովորական մոմից, նույնպես և արևով հալած մոմից:

Քամած մեղրը, վոր տիպիկ է հանրապետության, յերկրի, մարզի կամ շրջանի համար յուր գույնով, հոտով, համի հատկություններով, մեղրատուների տեսակներով, շաքարակալման ձևով (մեծահատիկ, մանրահատիկ, ճրագուաձև), ցուցահանդես են ներկայացվում 10 կգ-նոց ապակե բանկաներով և յուրաքանչյուր սորտից յերկուական որինակ:

Մեղվաբուծական ինվենտարը (վոչ գործարանային արտադրության) ընդունվում է ցուցահանդեսի համար միայն այնպիսի դեպքերում, յեթե նա յուրահատուկ ձևի յե, վորակով բարձր է գործարանային ստանդարտ մեղվաբուծական ինվենտարից և նրա արտադրական արժեքը գործարանայինից ցածր է:

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ցուցահանդեսի համար ընտրված՝ մեղրահացով և քամած մեղրը ցուցադրողները պահում են մաքուր, չոր և զով շենքերում:

Կատեգորիկ կերպով արգելվում է մեղրը պահել այնպիսի շենքերում, վորոնցում պահվում են կամ առաջներում պահվել են այնպիսի մթերքներ և նյութեր, վորոնք առանձնահատուկ (սպեցիֆիկ) հոտ ունեն (թթու կաղամբ, սոխ, ձկնեղեն, նավթ և այլն): Ամանեղենը պետք է կատարյալ մաքուր լինի, առանց կողմնակի հոտերի: Փայտյա ամանեղենը պետք է չոր լինի և խիտ:

Եքսպոնատի վերաբերյալ կազմվում է հետևյալ փաստաթուղթը.

ագրոպասպորտը:

XVII. ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մինչև եքսպոնատները Մոսկվա ուղարկելու վերաբերյալ ցուցահանդեսի կոմիտեյի հատուկ ցուցումը եքսպոնատները, իբրև կանոն, պահպանվում են անմիջականորեն տնտեսություններում (կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և այլն):

Եքսպոնատները պահեստ դնելու, նույնպես և պահելու շրջանում նրանց զննելու ժամանակ արձանագրություններ են կազմվում, որ ստորագրում են եքսպոնատների համար պատասխանատու անձինք և տվյալ կոլտնտեսությունը և խորհտնտեսությունն ապասարկող գյուղատնտեսը:

Եքսպոնատների պահպանված մնալու համար պատասխանատու են տնտեսությունների ղեկավարները—կոլտնտեսության նախագահը, խորհտնտեսության դիրեկտորը, ՄՏԿ դիրեկտորը և սելեկցիոն փորձակայանի դիրեկտորը:

Եքսպոնատները լավագույն ձևով պահպանելու վերաբերյալ կոլտնտեսություններին ոգնելու և նրանց հրահանգելու համար շրջհողբաժինները և ՄՏԿ-ի դիրեկտորներն առանձնացնում — նշանակում են համապատասխան մասնագետներ:

Այն դեպքերում, երբ հանրապետական, յերկրային ու մարզային ցուցահանդեսի կոմիտեների և համապատասխան ժողկոմատների կարգադրությամբ բնական եքսպոնատները տեղափոխվում են կենտրոնացված պահեստարանները, եքսպոնատների պահպանման պատասխանատվությունը դրվում է հանրապետությունների հողժողկոմների, յերկրի, մարզի հողվարչությունների պետերի վրա:

Եքսպոնատների պահպանումը կազմակերպելու գործում հիմնական ուշադրությունը պետք է դարձնել.

ա) Պահպանման հատկացված եքսպոնատների խնամքով պատրաստելու վրա (առողջ եկեղմպլյարների ընտրություն, սկզբնական չորացում մինչև սահմանված խոնավությունը և այլն):

բ) Պահպանման շենքերի ընտրության, պատրաստման և ախտահանման, ապա նաև նրանց սարքավորման վրա յուրաքանչյուր առանձին տեսակի եքսպոնատների պահպանման պայմանների համապատասխան (չոր, լավ ոդափոխվող շենքերի, բնական ու արհեստական չորացման և եքսպոնատները կախելու հարմարանքների, բանջարեղենի ու պտուղների պահպանման շենքերի՝ թարմ պտուղների, բանջարեղենի ու արմատապտուղների համար և այլն).

գ) այն վնասատուների ու հիվանդությունների դեմ սիստեմատիկ պայքար մղելու վրա, վորոնք փչացնում ու վոչնչացնում են եքսպոնատները — պայքար կրծողների, միջատների, սունկերի դեմ և այլն.

դ) շենքերի և նրանց մեջ գտնվող եքսպոնատների դրությանը սիստեմատիկ հսկելու վրա.

ե) վնասատուներից ու հիվանդություններից վնասված, մոլախոտերի սերմեր ու կողմնակի խառնուրդ պարունակող և վնասված եքսպանոտները ցուցահանդես չեն ընդունվում:

XVIII. ԵՔՍՊՈՆԱՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Բոլոր բնական եքսպոնատները վաթեթվում են միայն նոր տարայի մեջ:

Բոլոր կուլտուրաների սերմերն ըստ առանձին սորտերի վաթեթվում են ամուր տոպրակների մեջ (մանր սերմերը՝ յերկուտակ տոպրակների մեջ):

Հատիկային, տեխնիկական և կերային կուլտուրաների եքսպոնատները վաթեթվում են արկղների մեջ, վորոնք պատրաստվում են այն հաշվով, վոր եքսպոնատները հարկ չլինի ծռել, տրորել, կտրել:

Արկղը պետք է նոր լինի, պինդ, շինված ֆաներայից կամ բարակ տախտակներից մեկ կամ յերկու անջրպետով՝ հատիկով տոպրակներն առանձնացնելու համար և մինչև պատի ½ բարձրության յերկու անջրպետով՝ խուրձը տեղավորելու համար:

Խուրձը, վորի մեջ ամբողջ յերկարությամբ մաքուր փայտ է դրված, կապված է յերեք տեղից՝ արմատից ⅓-ով հեռու, ցողունների յերկարության կեսից և հասկերի մոտ, փաթաթված հարթ թղթով, տեղավորվում է անջրպետներով բաժանված ընների մեջ և վերևից սղմըվում ձողիկներով, վորոնք մեխերով ամրացվում են արկղի պատին:

Հատիկները մաքուր սպիտակ ամուր տոպրակներով դարսվում են բաժինների մեջ տախտակների կողմից:

Այն դեպքերում, յերբ կոլտնտեսությունը, խորհտնտեսությունը հատիկների եքսպոնատներ են ուղարկում մի քանի կուլտուրաների վերաբերյալ, նա եքսպոնատները կարող է ուղարկել մի քանի արկղով, դարսված ինչպես նշված է վերը, կամ առանձին ծրարել հատիկը և առանձին խրձերը:

Այդպիսի դեպքերում փոքր պարկերով հատիկը դրվում է այնպիսի արկղների մեջ, վորոնք շինված են հրահանգի ցուցումների համաձայն:

Բոլոր եքսպոնատները ցուցահանդես պետք է ուղարկվեն միաժամանակ:

Ամեն մի եքսպոնատ — խուրձ, հատիկ — պետք է ունենա ամուր կապված փայտե պիտակ, նշելով ուղարկողի (կոլտնտեսության, կայանի և այլն) հասցեն և կուլտուրայի, սորտի անունն ու քանակը:

Հատիկով լի տոպրակների մեջ և խրձի հասկերը փաթաթող թղթի տակ պետք է դնել նավթալինով լի մառլայի տոպրակներ: Այսպիսի փաթեթման դեպքում եքսպոնատների միջև ամենևին պետք չե դնել հարդ, տաշեղ, մամուռ կամ թուղթ:

Թփերը (որինակ՝ բամբակի) թելով ամրացվում են արկղի պատերին:

Այն դեպքում, յերբ եքսպոնատն ապակե տարայի մեջ պատրաստ է ուղարկվելու, փաթեթումը կատարվում է բաժանմունքներով պատրաստված արկղներում, տաշեղի և այլ միջադիրներով:

Բանջարանոցային կուլտուրաների, պտուղների, թփամրգերի և խաղողի փաթեթման ու տեղ հասցնելու կանոնները ցույց են տրված այս հրահանգի IX, X և XI բաժիններում:

Եքսպոնատների դրոշմանշումը.— Բոլոր արկղների, կողովների և փաթեթման բոլոր տեսակների վերին յերեսի վրա դրվում է հետևյալը. իբրև փոստային ծանրոց ուղարկելիս՝ Москва, 75, Пушкинское (б. Останкино), Всесоюзная Сельскохозяйственная выставка, в повилион (հիշատակվում է, թե վոր պավիլիոնն է ուղարկվում եքսպոնատը՝ „Зерно“, „Хлопок“, „Совхозы“ և այլն), համաձայն Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի Կոմիտեյի՝ եքսպոնատների ուղարկման վերաբերյալ ծանուցման:

Յերկաթուղով ուղարկելիս՝ Москва, станция Владыкино, Московско-окружной ж. д., Всесоюзная с Сельскохозяйственная Выставка, в повилион (հիշատակվում է թե վոր պավիլիոնն է ուղարկվում եքսպոնատը՝ „Зерно“, „Совхозы“ և այլն):

Փոստով և յերկաթուղով ուղարկելիս փաթեթի վրա անպայման նշվում է ուղարկողի ճիշտ հասցեն:

Բոլոր մակագրությունները պետք է կատարել չընջվող ներկով: Բացի սրանից, համաձայն ճանապարհների հաղորդակցության ժողկոմատի 3/I 1937 թ. №424 ЦЗ հեռագրի, Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդես ուղարկվող բոլոր բեռների վրա հատուկ պիտակներ պետք է փակցնել, մակագրված՝ „На Всесоюзную Сельскохозяйственную Выставку в Москве.“

Այս պիտակները կուղարկվեն ցուցահանդեսի բոլոր մասնակիցներին՝ ցուցահանդեսն եքսպոնատ ուղարկելու վերաբերյալ ծանուցման հետ միաժամանակ:

Նույնպիսի պիտակներ են փակցվում վագոնի ամեն կողմից՝ բեռները վագոնով ուղարկելիս:

Եքսպոնատի տարայի մեջ (արկղ, պարկ և այլն) դրվում է ցուցակ, հիշատակելով ցուցահանդեսի մասնակցի անունն ու հասցեն, եքսպոնատների, նրանց չափի կամ կշռի թվարկումը, ինչպես և այս հրահանգում նշված փաստաթղթերը, բացի ագրոպասպորտներից, վորոնք ներկայացվում են «Մասնակիցների ընտրության կարգի մասին» հրահանգի սահմանած կարգով:

Այն դեպքերում, յերբ եքսպոնատի տարայի մեջ հնարավոր չե գոկումենտներ դնել (տակառի, կոնսերված բանջարեղենի և այլն), վերջիններս ուղարկվում են փոստով՝ պատվիրած, եքսպոնատները բեռնելու հետ միաժամանակ:

Եքսպոնատներն ուղարկելու ժամանակի վերաբերյալ ցուցահանդեսի մասնակիցը պարտավոր է անհապաղ հաղորդել Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի Կոմիտեին այն ձևով, վոր նախատեսված կլինի նրան ուղարկվելիք ծանուցագրում: Սրա հետ միաժամանակ ցուցահանդեսի մասնակիցը եքսպոնատներ ուղարկելու մասին պետք է տեղեկացնի հանրապետության, յերկրի ու մարզի Ցուցահանդեսի Կոմիտեին, իսկ խորհրդատեսությունները, բացի դրանից, նաև իրենց ժողկոմատներին:

Կենտրոնացված պահեստներում (հանրապետության, յերկրի կամ մարզի) գտնվող եքսպոնատներն ուղարկում են անմիջականորեն համապատասխան ցուցահանդեսային կոմիտեն առանձնապես նշանակված անձի ուղեկցությամբ:

Եքսպոնատները կենտրոնացված պահեստարաններից ուղարկելու մասին հանրապետության, յերկրի կամ մարզի ցուցահանդեսային կոմիտեն հաղորդում է Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի Կոմիտեին, ինչպես նաև ցուցահանդեսի այն մասնակիցներին, վորոնց եքսպոնատները նա պահպանում ե:

Բնական եքսպոնատները հասցվում են Մոսկվա Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի հասցեյով այն ժամկետներին, վոր հաստատվում են ցուցահանդեսի յուրաքանչյուր մասնակցին ցուցահանդեսի կոմիտեյի աված հատուկ ծանուցումով:

Այս հրահանգով չնախատեսված բոլոր տեխնիկական ցուցումներն եքսպոնատների ընտրության, պահպանման և փոխադրման վերաբերյալ ցուցահանդեսի մասնակիցները կարող են ստանալ չրջհողբաժիններից, ՄՏԿ-ների ու խորհրդատեսությունների ագրոնոմներից, ինչպես նաև ԽՍՀՄ Հողժողկոմատի, Խորհրդատնտժողկոմատի, Սննդարդժողկոմատի և ՌՍՖՍՀ Հողժողկոմատի գլխավոր չրջությունների հատուկ հրահանգներից:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿՈՄԻՏԵ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0936741

29 ДЕК 1937 573

11
28726

Տեխ. խմբ. Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ա. Այվազյան

Գլավլիտի լիազոր՝ Կ—4889. Հրատ. 4277.
Պատվեր 1124. տիրաժ 2000
Թուղթ 62×94. Տպագր. 3¾ մամ.
Մեկ մամուլում 30720 նիշ. Հեղինակ. 2¾ մամ.
Հանձնված է տպագրության 11/IX—37.
Ստորագրված է տպագրության 22/XI—37

ԵՐԵՎԱՆ, ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂՈՑ 65